

# ԻՐԱՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## *Քրեադատավարական իրավունք*

**ՀԱՆՅԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՆՁՆՄԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ  
ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ  
(ԸՍՏ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ  
ՕՐԵՆՍԳՐԻ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ)**

### **Հ.Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ն. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Պետության հասարակական-քաղաքական կյանքում ծավալվող հասարակական հարաբերությունների զարգացմանն ընդառաջ իրավական դաշտում պարբերաբար անհրաժեշտություն է առաջանում կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և լրացումներ: Գաղտնիք չէ, որ շուրջ տասներեք տարի գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն իր գոյության ողջ ժամանակահատվածում իրավակիրառ պրակտիկայում առավելապես կատարել է իր առաքելությունը: Այնուհանդերձ, պետք է ընդգծել, որ այն չի կարող համարվել կատարյալ իրավական ակտ: Դրա մասին են վկայում այն բազմաթիվ փոփոխություններն ու լրացումները, որոնք պարբերաբար կատարվել են օրենսգրքում:

Ի լրումն այս ամենի՝ հարկ է ընդգծել, որ արդեն իսկ մշակվել և շրջանառության մեջ է դրվել քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետև՝ նախագիծ), որն հավանաբար գործածության մեջ կդրվի շուտով և կփոխարինի գործող օրենսգրքին:

Համաձայն նախագիծը մշակող հեղինակների ներկայացրած հիմնավորման՝ գործող քրեական դատավարության օրենսգիրքն օբյեկտիվորեն ի վիճակի չէ համապարփակ կարգավորման ենթարկել քրեական գործերի քննության և լուծման ընթացակարգը, այդ գործընթացի շրջանակներում ապահովել

հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը, հետևաբար և քրեական դատավարության խնդիրների լուծումն ու նպատակների նվաճումը: Վերջիններս կարծում են, որ ներկայումս առկա են բոլոր այն օբյեկտիվ նախադրյալները /իրավական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն/, որոնց ամբողջությունը թույլ է տալիս խոսել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման անհրաժեշտության մասին:

Ինչ խոսք, կարելի է համաձայնվել նման հիմնավորման հետ, սակայն հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ պետք է արձանագրել, որ քրեական դատավարության նոր օրենսգիրքն էլ իր հերթին կարող է արժանանալ գործող օրենսգրքի ճակատագրին, եթե իրավական ակտի մշակման փուլում առավելապես հաշվի չառնվեն հնարավոր հետագա զարգացումները:

Որպես կարևոր խնդիր կցանկանայինք անդրադառնալ նախագծում և գործող օրենսգրքում ամրագրված քրեադատավարական ինստիտուտներից մեկի՝ միջազգային իրավական օգնության և դրա հիմնական տեսակներից՝ հանձնման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող դրույթների համեմատական վերլուծությանը:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ հետազոտված երկու աղբյուրներում էլ ամրագրված 47 հոդվածներն ըստ էության գրեթե կրկնվում են՝ սկսած հոդվածների վերնագրերից, վերջացրած դրանց բովանդակությամբ: Արձանագրված հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ եթե գործող օրենսգրքում հոդվածները խմբավորված են 5 առանձին գլուխներում (տե՛ս գլուխներ 54-րդ, 54<sup>1</sup>-րդ, 54<sup>2</sup>-րդ, 54<sup>3</sup>-րդ, 54<sup>4</sup>-րդ), ապա նախագծում որպես նորամուծություն նմանությամբ վերնագրված 5 գլուխները (տե՛ս, գլուխներ՝ 64-րդ, 65-րդ, 66-րդ, 67-րդ, 68-րդ) արդեն ամրագրված են «Քրեական վարույթով իրավական օգնություն» վերտառությամբ նոր՝ առանձին բաժնում (տե՛ս, նախագծի 16-րդ բաժին): Ինչ խոսք, նշված լրացումն իրավական կարգավորման առումով դրական

պետք է համարել, քանի որ ի սկզբանե թվարկված բոլոր 5 գլուխներն որպես մեկ ամբողջություն կարող են հանդես գալ մեկ առանձին բաժնի կազմում:

Ըստ էության, և՛ գործող օրենսդրությամբ, և՛ նախագծով քրեական գործերով (վարույթով) իրավական օգնության իրականացման համար նախատեսված են 2 առանձին հիմքեր, ինչպես միջազգային պայմանագրերի առկայության, այնպես էլ դրանց բացակայության պարագայում (փոխադարձության սկզբունքի հիման վրա): Երկու առանձին դեպքերում էլ մանրամասնորեն նախատեսված են քրեական գործերով (վարույթով) միջազգային իրավական օգնության հիմնական տեսակին՝ հանձնմանը վերաբերող դրույթներ:

Այսպես, ուսումնասիրված երկու աղբյուրներն էլ գրեթե նույնությամբ ընդգրկում են համապատասխան հոդվածներ՝ կապված հանցագործություն կատարած անձանց օտարերկրյա պետությանը հանձնելու, ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալման, կալանավորման, հանձնումը մերժելու, կրկնակի հանձնման և մի շարք այլ գործընթացների վերաբերյալ: Օրինակ, գրեթե փոփոխության են ենթարկվել հանձնելու վերաբերյալ խնդրանքի բովանդակությանը ներկայացվող պահանջները (ՀՀ ՔԴ-Օ 489-րդ և նախագծի 543-րդ հոդվածներ): Համաձայն նախագծի՝ դրանց թվին են դասվում.

1) խնդրանքի հասցեատիրոջ՝ Հայաստանի Հանրապետության դատարանի կամ դատախազության անվանումը (ըստ նախագծի սուբյեկտների շարքում բացառվել է հետաքննության մարմինը)

2) արարքի փաստական հանգամանքների նկարագրությունը և խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության օրենքի բնագիր տեքստը, որի հիման վրա այդ արարքը համարվում է հանցագործություն

3) անձի անունը, հայրանունը և ազգանունը, որի հանձնումը հայցվում է, նրա քաղաքացիությունը, բնակության կամ

գտնվելու վայրը (հասցեն) և հնարավորության դեպքում՝ նրա մասին այլ տվյալներ.

4) նշում հանցագործությանը պատճառված վնասի չափի և խնդրանքն ուղարկելու պահի դրությամբ դրա հատուցման մասին:

Անփոփոխ են մնացել նաև հանձնումը մերժելու վերաբերյալ նախատեսված հիմքերը: Դրանք թե նախագծով, և թե գործող օրենսդրությամբ նույնն են: Օրինակ, անձի հանձնման մասին օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի կատարումը մերժվում է, եթե

1) հանձնման վերաբերյալ խնդրանքը ՀՀ իրավասու մարմնի կողմից ստանալու պահին խնդրանքը ներկայացնող օտարերկրյա պետության օրենքին համապատասխան քրեական հետապնդում չի կարող հարուցվել կամ դատավճիռը չի կարող ի կատար ածվել վաղեմության ժամկետն անցնելու պատճառով կամ այլ օրինական հիմքով

2) անձի նկատմամբ նույն արարքի համար արդեն իսկ կայացվել է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ քրեական վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում

3) խնդրանքը վերաբերում է ՀՀ քաղաքացու հանձնմանը

4) հանձնման դեպքում, տվյալ օտարերկրյա պետության օրենքներին համապատասխան, կարող է նշանակվել մահապատիժ, և այդ պետությունը բավարար երաշխիքներ չի տալիս առ այն, որ հանձնելու դեպքում այդպիսի պատիժ չի նշանակվի և չի կիրառվի:

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ նախագծում փոքր-ինչ փոխվել է մոտեցումը քրեական վարույթի շրջանակներում կատարվող «հարցում» հասկացության վերաբերյալ: Եթե գործող օրենսդրությամբ միջպետական հարաբերություններում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու կարգում (ՀՀ ՔԳՕ 474-րդ հոդված) ՀՀ դատարանի, դատախազների, քննիչների, հետաքննության մարմինների կողմից օտարերկրյա պետության տարածքում հարցաքննության,

զննության, առգրավման, խուզարկության, փորձաքննության և այլ դատավարական գործողությունների կատարման համար նախատեսված «հարցում» հասկացությանը հավասար կիրառվում են նաև «հանձնարարություն» կամ «խնդրանք» տերմինները, սպա նախագծի 524-րդ համանման հոդվածի տեքստից բացառվել են «հանձնարարություն» կամ «խնդրանք» տերմինները, և արդյունքում օգտագործվում է միայն «հարցում» հասկացությունը: Այլ է մոտեցումը միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում իրականացվող իրավական օգնության պարագայում: Ինչպես նախագծի 537-րդ, այնպես էլ գործող օրենսգրքի 483-րդ հոդվածներում հավասարապես կիրառվում են «հանձնարարություն», «հարցում» կամ «խնդրանք» հասկացությունները:

Որպես մեկ այլ փոփոխություն՝ տեղին է մեջբերել նախագծի ողջ տեքստից, այդ թվում՝ 16-րդ բաժնից «քրեական գործ» հասկացության բացառումը, որին փոխարինելու է եկել «քրեական վարույթ» հասկացությունը: Ըստ էության՝ վերջինս դասվում է նախագծում տեղ գտած առանցքային փոփոխությունների շարքին:

Այսպիսով, քրեական գործերով (վարույթով) միջազգային իրավական օգնության ոլորտը կանոնակարգող ՀՀ քրեադատավարական օրենսդրության և նախագծի համապատասխան դրույթների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ այն արմատական փոփոխության չի ենթարկվել, ինչն էլ կարելի է բացատրել հետևյալ երեք հանգամանքներով

1) գործող օրենսդրության կիրառության ողջ ժամանակահատվածում փաստացի փոփոխության չեն ենթարկվել ոլորտի հետ կապված հասարակական հարաբերությունները

2) գործող օրենսգրքի դրույթներն այնքան մշակված, կանխատեսված և արդիական են, որ առավելապես բավարարում են ոլորտում ծագող իրավահարաբերությունների կանոնակարգմանը

3) առկա են թե՛ առաջին, թե՛ երկրորդ կետերում նշված հանգամանքները:

**Առանցքային բառեր.** քրեական գործ, քրեական վարույթ, միջազգային իրավական օգնություն, հանձնում, հանձնարարություն, խնդրանք, հարցում:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Հանձնման վերաբերյալ Եվրոպական կոնվենցիա, 13.12.1957թ. Փարիզ
2. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք // Պաշտոնական տեղեկագիր, Հատուկ թողարկում, - 02.05.2012թ.
3. ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ // URL: <http://www.moj.am/files/drafts/3/30.pdf>
4. Петросян А.Р. Возбуждение уголовного дела и осуществление уголовного преследования в рамках международной правовой помощи (по материалам Российской Федерации и Республики Армения) – Ер.: изд. Вак-Ван-Ка. 2008 - 179с.

### **Ա.Ր. ՍԵՏՐՕՅԱՆ, Ն.Ա. ԱՎԵՏԻՏՅԱՆ ՏՐԱՎՆԻՏԵԼՆՈ-ՍՐԱՎՈՎՈՅ ԱՆԱԼԻԶ ՈՐՄ ՐԵԳՍԼԻՐՈՒՅՈՒՄԻ ԻՆՏԻՏՈՒՏ ՎԻԴԱԿԻ ԼԻՑ ՏՕՎԵՐՏԻՎՄԻՔ ՍՐԵՏՍՒՊԼԵՆԻԵ (ՍՕ ԴԵՅՏՎՈՅՈՒՄԵՍՄՈՒ ԱՍՏՈՒՆՈՒՄԵՍ ՍՐՈՍԵՍՍԱԼՆՈՒ ՄՈՒԴԵԿՍՍ ՐԱ Ի ՍՐՈՅԵԿՏՍ ՆՈՎՈՒ ՄՈՒԴԵԿՍԱ)**

#### **ՐԵԶՅՈՒՄԵ**

Վ ատյե ԻԶՍԿԱՅՈՒՄ ԼՈՒԶՈՒՄԵՆ, ԶԿՐԵՊԼԵՆՆԵ Վ ԱՍՏՈՒՆՈՒՄ-ՍՐՈՍԵՍՍԱԼՆՈՒ ՄՈՒԴԵԿՍՍ Ի ՍՐՈՅԵԿՏՍ ՆՈՎՈՒ ՄՈՒԴԵԿՍԱ, ՐԵԳՍԼԻՐՈՒՅՈՒՄԻ ԻՆՏԻՏՈՒՏ ՎԻԴԱԿԻ ԼԻՑ ՏՕՎԵՐՏԻՎՄԻՔ ՍՐԵՏՍՒՊԼԵՆԻԵ. Վ ՐԵԶՍՒԼՏԱՏԵ ՏՐԱՎՆԻՏԵԼՆՈ-ՍՐԱՎՈՎՈՅ ԱՆԱԼԻԶԱ ՍՐԵԴՍՏԱՎՈՅՈՒՄ ԸՐԱԶԼԻԿԻԱ Ի ՍՎՏՈՐԵՆԻԱ, ՍՓԵԿԻԿԱ ՍՐԱՎՈՎՈՅ

регулирования положений предусмотренных в двух источниках.

Заключительная часть статьи дополняется комментариями о возможных причинах сохранения основных действующих положений в проекте нового УПК РА.

**Ключевые слова:** уголовное дело, уголовное производство, международная правовая помощь, выдача, поручение, просьба, запрос.

**H.R. PETROSYAN, N.A. AVETISYAN**  
**THE COMPARATIVE ANALYSIS OF PROVISIONS**  
**REGULATING THE INSTITUTION ON EXTRADITION OF**  
**PERSONS COMMITTED CRIME.**  
**ACCORDING TO THE EXISTING CRIMINAL**  
**PROCEDURE CODE AND NEW DRAFT OF THE CODE.**

**Summary**

In this article the study is being conducted on provisions fixed in the criminal procedure code and new draft of the code of the Republic of Armenia, which are regulating the institution on extradition of persons committed crime. In the result of comparative analysis the existing differences and repetitions, the specifics of legislative regulation, available in two sources, are presented.

The final part of the article is completed with the comments concerning the possible reasons of preservation of the main provisions in the new criminal procedure code.

**Key words:** criminal case, criminal proceedings, international legal assistance, extradition, assignment, application, request.